

**Հայաստանի Հանրապետությունում
կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ
նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիր**

Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում կանանց հիմնախնդիրների լուծման ուղղությամբ տարվող պետական քաղաքականության սկզբունքները, առաջնահերթությունները և հիմնական ուղղությունները: Ծրագիրը հիմնված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համապատասխան դրույթների վրա և նպատակաուղղված է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, Պեկինի 4-րդ Համաշխարհային համաժողովի (1995թ.) հանձնարարականների, Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերի, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջների և Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը:

Ծրագիրը նպաստելու է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովմանը, որպես ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն կառուցելու և քաղաքացիական հասարակություն կերտելու նախապայման:

Ծրագիրն իր գործողություններում նաև օժանդակելու է կանանց սոցիալ-տնտեսական հարցերի կարգավորմանը՝ դրանով իսկ նպաստելով երկրում աղքատության հաղթահարմանը Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում:

Դիտելով կնոջը որպես անհատականություն, կին և մայր՝ Ծրագրի մտտեցումն է չհակադրել ընտանիքը կնոջ մասնագիտական կամ հասարակական և քաղաքական գործունեությանը, այլ ստեղծել պայմաններ կնոջ հնարավորությունների լիակատար դրսևորման համար և աշխատանքային ոլորտում, և ընտանիքում:

Դիտելով կնոջ և՛ տղամարդու բնությունից եկող առանձնահատկությունները, և՛ տարբերությունները որպես մեկը մյուսին լրացնող հատկանիշներ և հասարակական կյանքում ներդաշնակության հասնելու գրավական, Ծրագրի նպատակն է իր գործողություններում նպաստել այդ առանձնահատկությունների պահպանմանը:

Թեև այսօր Հայաստանի վարկանիշը Մարդկային զարգացման համաթվով 76-րդն է, իսկ գենդերային զարգացման համաթվով՝ 62-րդը, որը վկայում է կանանց և տղամարդկանց միջև գոյություն ունեցող որոշակի անհավասարության մասին, այնուամենայնիվ, պատմական փաստերը հիմք ընդունելով, կարող ենք ասել, որ կնոջ նկատմամբ խտրականությունը մեր ազգային մտածողության և հոգեբանության մեջ արմատավորված երևույթ չէ, առկա անհավասարության որոշ դրսևորումներ կապված են ներկայիս սոցիալ-տնտեսական վիճակի և հասարակության որոշ շերտերի բարեկրթական ցածր մակարդակի հետ:

Այդ իսկ պատճառով Ծրագիրը իր գործողություններում կարևորում է քարոզչական աշխատանքը, ինչպես նաև հասարակության ընդհանուր բարեկրթմանն ուղղված միջոցառումները:

Ծրագիրը բաղկացած է 8 բաժիններից՝

- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովումը որոշումների կայացման մակարդակում և հասարակական, քաղաքական ոլորտներում
- Կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում

- Կրթության ոլորտ
- Կանանց առողջական վիճակի բարելավում
- Կնոջ նկատմամբ բռնության երևույթի վերացում
- Կանանց և աղջիկների նկատմամբ թրաֆիկինգի երևույթի վերացում
- ՁԼՄ-ների և մշակութային հաստատությունների դերը կանանց հիմնահարցերի լուսաբանման և կնոջ ընդօրինակելի կերպարի ձևավորման գործում
- Ինստիտուցիոնալ բարեփոխումներ:
Յուրաքանչյուր բաժնում ներառված են հետևյալ կետերը՝ իրավիճակի վերլուծություն, խնդիրների հստակեցում, խնդիրների լուծման ռազմավարական ուղիներ և միջոցառումներ:

Ծրագիրն իրականացվելու է միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

Բաժին 1

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովումը որոշումների կայացման մակարդակում և հասարակական, քաղաքական ոլորտներում

Իրավիճակի վերլուծություն

1993թ.-ին Հայաստանը վավերացրեց ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան:

Համաձայն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իշխանությունները պարտավորվեցին ձեռնարկել գործնական քայլեր պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը ապահովելու համար: Կոնվենցիայի վավերացմանը հաջորդեց մի շարք այլ փաստաթղթերի ընդունում, սակայն էական տեղաշարժ այս ոլորտում առ այսօր չի նկատվում:

Վերջին փաստերը հետևյալն են. 2003թ.-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններից հետո կանայք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում կազմում են 4.1%: 6 կին պատգամավորներից մեկը ընտրվել է մեծամասնական ցուցակով, 5-ը՝ համամասնական: Կանայք մեծամասնական ցուցակներում կազմում էին 4%, իսկ համամասնական ցուցակներում՝ 14.1%: Թվերից կարելի է եզրակացնել, որ կանանց փոքր տոկոսը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում պայմանավորված է նաև ընտրություններին նրանց նույնքան քիչ մասնակցությամբ: Կին պատգամավորներից մեկը մշտական հանձնաժողովի նախագահ է:

Եթե երկրի խորհրդարանում կանայք կազմում են 20%-ից պակաս, ապա դա դժվարացնում է սոցիալական ուղղվածություն ունեցող օրենքների ընդունումը, միևնույն ժամանակ միջազգային փորձը ցույց է տալիս, որ առանց ժամանակավոր արտակարգ միջոցներ գործադրելու (զենդերային քվոտաներ) դժվար է կանանց և տղամարդկանց քաղաքական հավասար գործունեությունը ապահովել:

Սահմանափակ է դեկավար կանանց թիվը նաև գործադիր իշխանության մարմիններում՝ 1 կին նախարար և 5 կին փոխնախարարներ:

Նույն պատկերն է նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: 2002թ.-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում 932 կին թեկնածուներից ընտրվել են 8 կին:

Կանանց և տղամարդկանց հավասարաչափ մասնակցությունը առկա է կառավարման միջին օղակներում, ինչպես նաև Հայաստանում գործող միջազգային կազմակերպություններում:

Կանանց թվի գերակշռություն է նկատվում, մասնավորապես կրթության, առողջապահության, մշակույթի և սպասարկման ոլորտներում:

Իսկ որոշումներ կայացնելու իրենց իրավունքը կանայք հիմնականում իրականացնում են ոչ կառավարական կազմակերպությունների հատվածում, այն դեպքում, երբ ժողովրդավարական, քաղաքացիական և կայուն հասարակություն ձևավորելու հարցում կնոջ և կանանց

կազմակերպությունների դերը գնալով մեծանում է: Կանայք շատ անելիքներ ունեն ինչպես խաղաղության ապահովման նույնպես և շրջակա միջավայրի պաշտպանության հարցերում:

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից 2000թ.-ին ընդունված 1325 բանաձևը նոր հազարամյակի կարևորագույն փաստաթղթերից է, որն արտացոլում է, ինչպես խաղաղասիրական գործընթացներում և հակամարտությունների կանխարգելմանն ու կարգավորմանն ուղղված որոշումների կայացման բոլոր մակարդակներում կանանց ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը, այնպես էլ պատերազմի ժամանակ և հակամարտություններից հետո կանանց և աղջիկների իրավունքների պահպանության հիմնահարցը:

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը անդամ երկրներին կոչ է անում զինված հակամարտություններում հետևել կանանց և աղջիկների իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի պահպանմանը, իսկ հաշտության համաձայնությունների ընդունման և իրականացման գործընթացում ցուցաբերել գենդերային հայեցակարգի վրա հիմնված մոտեցում և ապահովել կանանց լիարժեք մասնակցությունը խաղաղասիրական գործընթացներում:

Նույն մոտեցումն է նաև շրջակա միջավայրի պաշտպանության առնչությամբ:

Անհրաժեշտ է ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը, որովհետև այն կարևոր է մարդկության ինքնապահպանման, ինչպես նաև՝ կնոջ վերարտադրողական առողջության համար: Միևնույն ժամանակ պետք է մեծացնել կանանց և կանանց կազմակերպությունների մասնակցությունը այդ գործընթացներում:

Ներկայումս Հայաստանի էկոլոգիական վիճակը մտահոգիչ է: Քաղաքներում անբավարար է բնակելի տարածքների բարեկարգման, խմելու ջրի, հակահամաճարակային ծառայությունների և ջեռուցման մակարդակը: Կրճատվում են կանաչ տարածքները քաղաքներում և մասնավորապես Երևանում: Եվ դա այն դեպքում, երբ Երևանի տարածքը 22.700 հեկտար է, իսկ կանաչ տարածքները՝ 2400, որը Եվրոպական ստանդարտներով 10 անգամ քիչ է 1.1 մլն բնակիչ ունեցող քաղաքի համար: Սա իհարկե ոչ միայն քաղաքաշինական, բնապահպանական և մշակութային խնդիր է, այլ նույնքան՝ սոցիալական:

Խնդիրները

- որոշում կայացնող մակարդակներում և քաղաքականության մեջ կանանց ոչ բավարար ներգրավվածությունը
- տղամարդկանց և կանանց անհավասար մասնակցությունը հասարակական և քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում

Ռազմավարությունը

- 1.1. ապահովել ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի և Պեկինի համաժողովի հիմնական հանձնարարականների կատարումը
- 1.2. ապահովել համապատասխան իրավական ակտերի կիրարկման վերահսկողությունը
- 1.3. ապահովել կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը երկրի քաղաքական և հասարակական կյանքում
- 1.4. նպաստել կանանց իրազեկությանը գենդերային հարցերում, իրավական գրագիտության բարձրացմանը և նրանց ներուժի բացահայտմանը
- 1.5. ապահովել կանանց ակտիվ մասնակցությունը ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացներում

Միջոցառումները

- 1.1.1. անցկացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության գենդերային փորձաքննություն և անհրաժեշտության դեպքում մշակել առաջարկություններ համապատասխան իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու համար
- 1.1.2. ուսումնասիրել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ ապահովող Հայաստանի Հանրապետության միջազգային փաստաթղթերը՝ ՀՀ օրենսդրությունը միջազգային նորմերին համապատասխանեցնելու նպատակով
- 1.2.1. նախապատրաստել պարբերական զեկույցներ ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի դրույթների և

- Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերի հանձնարականների կատարման վերաբերյալ
- 1.3.1. մշակել առաջարկություններ ժամանակավոր քվտաների ներդրման վերաբերյալ՝ օրենսդիր իշխանության մարմնում կանանց լիարժեք մասնակցությունն ապահովելու նպատակով
 - 1.3.2. ներկայացնել վավերացման «Կանանց քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան
 - 1.3.3. քննարկել և ներկայացնել վավերացման ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի արձանագրությունը (2000թ. դեկտեմբերի 22)
 - 1.3.4. իրականացնել հետազոտություններ, ստեղծել վիճակագրական տեղեկատվություն հասարակական, քաղաքական կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության վերաբերյալ
 - 1.3.5. հրապարակել տեղեկատվություն չգրադված աշխատանք փնտրող կանանց մասին, ինչպես նաև հասարակական, քաղաքական կյանքին կանանց մասնակցությանը նպաստող միջոցառումներում ընդգրկելու վերաբերյալ
 - 1.4.1. կազմակերպել կանանց լիդերության և սեփական իրավունքների պաշտպանության տեխնոլոգիաների ուսուցման դասընթացներ
 - 1.4.2. մշակել և իրականացնել բազային կրթության և շարունակական ուսուցման ծրագրեր՝ կառավարման, պետական և քաղաքական ոլորտների աշխատանքներում կանանց ընդգրկվածությունն ապահովելու նպատակով
 - 1.5.1. մշակել առաջարկություններ խաղաղարար գործընթացներում կանանց մասնակցությունն ընդլայնելու ուղղությամբ
 - 1.5.2. մշակել առաջարկություններ շրջակա միջավայրի բարելավման, բնության պահպանության ծրագրերի մշակման ու իրականացման վերաբերյալ՝ ընդլայնելով այդ գործընթացներում կանանց մասնակցությունը, այդ թվում հասարակական աշխատանքների միջոցով

Բաժին 2

Կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում

Իրավիճակի վերլուծություն

Հայաստանում տնտեսության բոլոր բնագավառներում կանանց և տղամարդկանց գործունեության հավասար իրավունքները ամրագրված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սակայն այսօր կանանց ֆինանսա-տնտեսական գործունեությունը հիմնականում սահմանափակվում է մանրածախ առևտրով և փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ մասնավորապես սպասարկման ոլորտում:

Կանանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը միայն տնտեսական խնդիր չէ այլև առնչվում է կանանց գործունեությունը քաղաքական դաշտում մեծացնելու հնարավորությունների հետ:

Շուկայական նոր հարաբերությունների հաստատմամբ երկրում տեղի ունեցան մի շարք կառուցվածքային փոփոխություններ, որի հետևանքով շատ հիմնարկներ և ձեռնարկություններ փակվեցին կամ վերակազմավորվեցին, տեղի ունեցավ մեծ չափով աշխատատեղերի կրճատում, նվազեց որոշ մասնագիտությունների պահանջարկը, աճեց գործազրկությունը, ակտիվացան միգրացիոն գործընթացները: Այս ամենի արդյունքում բնակչության մի ստվար զանգված հայտնվեց ծայրահեղ կարիքի մեջ:

Գործազրկությունը, թեև ընդհանուր հիմնախնդիր է տղամարդկանց և կանանց համար, սակայն վիճակագրությունը ցույց է տալիս, որ անկախ գործազուրկների թվի տարեկան ցուցանիշների փոփոխումից, անփոփոխ է մնացել այդ խմբում կանանց թվի գերակշռությունը: 2002թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված գործազուրկների ընդհանուր թվում կանայք կազմում էին 66%: Կանանց գործազրկության մակարդակը 13.5% է, որը ավելի քան երկու անգամ գերազանցում է տղամարդկանց համապատասխան ցուցանիշը՝ 6,4%:

Պաշտոնապես գրանցված գործազրկության ըստ սեռի վերլուծությունը 1995-2001թվականների ընթացքում ցույց է տալիս, որ Հայաստանում գործազուրկների առավելագույն

մասը կազմում են կանայք: Ավելացնենք նաև, որ 1995թ.-ի համեմատ կանանց գործազրկության մակարդակը 2002թ.-ին աճել է 3.5%-ով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործազուրկի կարգավիճակ ստացած կանայք առավել մեծ թիվ են կազմում քաղաքներում: Իսկ տնային տնտեսությունների ուսումնասիրությունները վկայում են, որ ավելի ծանր սոցիալ-տնտեսական վիճակում գտնվում են բազմազավակ ընտանիքները և նաև այն ընտանիքները, որոնք գլխավորվում են կանանց կողմից:

Այսպիսով, աշխատաշուկայում ձևավորված նոր հարաբերություններն ու պահանջները և քայքայված ենթակառուցվածքը կանանց դարձրին ավելի անմրցունակ:

Բացի այդ, ընտանեկան և մասնագիտական պարտականությունները համատեղելու անհնարինությունը գրկում է կանանց անհրաժեշտ աշխատանքային ստաժից, ինչը հետագայում բացասաբար է անդրադառնում նրանց կենսաթոշակի չափին:

Երկրում փոքր և միջին ձեռնարկատիրությունը դեռևս գտնվում է զարգացման փուլում, բացակայում են ձեռներեցությունը խթանող բարենպաստ պայմանները, ինչպես նաև արդյունավետ հարկային դաշտը: Այս ամենը մեծապես արգելակում է նաև կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը: Դեռևս 1997թ. ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից իրականացրած հետազոտությունները ցույց են տվել, որ գործարարների շրջանում կանայք Երևանում կազմել են 17.2%, իսկ մարզերում՝ 3.1%, ընդ որում արտադրության ոլորտում զբաղված կանայք այստեղ կազմում են շատ փոքր թիվ՝ 1.9%, կին-ձեռներեցների գործունեությունը հիմնականում առնչվում է առևտրի և սպասարկման ոլորտների հետ:

Մինչդեռ կանանց տնտեսական առաջընթացը անհրաժեշտ պայման է նրանց դերի բարձրացման համար ոչ միայն երկրի տնտեսական, այլև քաղաքական կյանքում:

Աշխատաշուկայում կանանց մասնակցության նվազեցմանը նպաստեց նաև վերջին տարիներին երեխաների նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության համակարգի ոչ բավարար գործունեությունը, մասնավորապես, նախադպրոցական հիմնարկների կրճատումը, կենցաղ-սպասարկման ոլորտի ձեռնարկությունների գործունեության մասշտաբների սահմանափակումը: 1996-2001թ. նախադպրոցական հիմնարկների թիվը 978-ից դարձել է 712, որից՝ /2001թ.-ին/ չեն գործել 135-ը: Կրճատվել են ոչ միայն նախադպրոցական համակարգի հզորությունները, այլև ընդգրկվածությունն ու մատչելիությունը:

Ծանր իրավիճակներում գտնվող ընտանիքների զգալի թվով երեխաներ հայտնվել են մանկատներում և գիշերօթիկ դպրոցներում:

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևոր բնագավառներից է ագրոպարենային համակարգը: 2001թ. մարդահամարի արդյունքների համաձայն հանրապետության բնակչության 35.7%-ը ապրում է գյուղական վայրերում: Գյուղատնտեսությամբ զբաղվում է բնակչության 45.1%-ը, որի գրեթե կեսը կանայք են, և այդ թիվը շարունակում է մեծանալ: Այս բնագավառում առկա խնդիրներից է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ցածր մակարդակը, որի արդյունքում աշխատանքները հիմնականում կատարվում են ձեռքով, ինչը չի կարող չանդրադառնալ կանանց ընդհանուր և վերարտադրողական առողջության վրա:

Վերջին տարիներին Հայաստանում կանանց տնտեսական աջակցությանն ուղղված վարկային ծրագրերի մեծ մասը բավարար արտոնյալ չեն, ուստի չեն նպաստում կանանց տնտեսական ակտիվացմանը: Որոշ ծրագրերի վարկերի տոկոսն այնքան բարձր է, որ հնարավորություն չի տալիս կանանց զարգացնելու իրենց տնտեսությունը, այլ լավագույն դեպքում օգնում է նվազագույնս հոգալու ընտանիքի ծախսերը:

2001-2002թթ. ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության, ինչպես նաև ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից կատարած ուսումնասիրությունները, ցույց տվեցին, որ երկրից մեկնողների շուրջ 15.2%-ը կազմում են աշխատանքային միգրանտները: Մեկնելու պատճառները սոցիալ-տնտեսական բնույթի են. մասնագիտական աշխատանք գտնելու և հեռանկարի բացակայություն, ցածր եկամուտներ, ապագայի նկատմամբ անվստահություն: Մեկնողների շուրջ 42%-ը կանայք են:

Կանանց խոցելի խմբերից են փախստական կանայք, որոնք կազմում են ընդհանուր փախստականների թվի 54%-ը, նրանց գրեթե կեսը ծերեր են:

Փախստականները ունեն ռուսական կրթություն և օբյեկտիվ պատճառներով վատ են տիրապետում հայերենին: Բացի այդ, նրանք հիմնականում եղել են քաղաքաբնակ, իսկ Հայաստանում տեղավորվել են մեծամասամբ գյուղական վայրերում, որտեղ ավելի սուղ է

աշխատանք գտնելու հնարավորությունը և հիմնականում այն կապված է հողագործության հետ: Այս հանգամանքները ավելի են բարդացնում նրանց ինտեգրման գործընթացը:

Հատուկ ուշադրության կարիք ունեն մաս կլին գինձառայողները, որոնց սոցիալ-տնտեսական վիճակը դեռևս բավարար ուսումնասիրված չէ:

Նոր տնտեսական հարաբերությունները խոչընդոտներ ստեղծեցին մաս արվեստի և գիտության կլին գործիչների համար: Նկատելի է նոր տնտեսական հարաբերություններում արդյունավետ գործելու գիտելիքների և հմտությունների պակասը:

Խնդիրները

- կանանց եկամուտների ցածր մակարդակը
- կանանց շրջանում մեծ չափերի հասնող գործազրկությունը
- փախստական կանանց սոցիալական առավել անպաշտպանվածությունը
- կանանց ձեռնարկատիրական գործունեության ցածր մակարդակը
- կանանց ոչ բավարար մասնակցությունը գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին
- կանանց ոչ բավարար մասնակցությունը քաղաքային համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին
- ավանդականորեն կանանց զբաղվածությունը ապահովող ժողովրդական արվեստների և արհեստների զարգացածության ցածր մակարդակը
- արվեստի և գիտության կլին գործիչների նոր տնտեսական հարաբերություններում արդյունավետ գործելու գիտելիքների և հմտությունների պակասը
- երեխաների նախադպրոցական խնամքի համակարգի ոչ բավարար գործունեությունը

Ռազմավարությունը

- 2.1. սոցիալական քաղաքականության ուղղորդումը կանանց տնտեսական վիճակի բարելավմանը
- 2.2. սոցիալական քաղաքականության ուղղորդումը ծնելիության խթանմանը, օժանդակմանը
- 2.3. կարգավորել կանանց աշխատուժի օգտագործումը, նպաստելով գործազուրկ կանանց թվի կրճատմանը
- 2.4. նպաստել կանանց ձեռնարկատիրական գործունեության ընդլայնմանը
- 2.5. բարձրացնել կանանց մասնակցությունը գյուղական բնակավայրերի զարգացմանը ապահովել կանանց համար նոր աշխատատեղեր գյուղական բնակավայրերում
- 2.6. արվեստի և գիտության կլին գործիչներին նոր տնտեսական հարաբերություններում արդյունավետ գործելու գիտելիքների և հմտությունների մեծացում
- 2.7. ավանդականորեն կանանց զբաղվածությունը ապահովող ժողովրդական արվեստների և արհեստների զարգացում

Միջոցառումները

- 2.1.1. հավաքագրել և ամբողջականացնել կանանց աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալները, վեր հանել դրանց առաջացման պատճառները և հետևանքները
- 2.1.2. մշակել և կազմակերպել զբաղվածության և առողջապահական աջակցության հատուկ ծրագրեր, փախստական կանանց և նրանց ընտանիքների համար
- 2.2.1. «Կարիքավոր բազմազավակ ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարություն
- 2.2.2. կատարելագործել պետական նպաստների համակարգը՝ կարևորելով երեխաներ ունեցող ընտանիքների, կանանց առավել խոցելի խմբերի առաջնահերթ օգնությունը
- 2.3.1. իրականացնել գործազուրկ կանանց մասնագիտական ուսուցման ծրագրեր
- 2.3.2. մշակել կանանց մասնագիտական որակավորման շարունակականությունն ապահովող մեխանիզմները աշխատանքի շուկայում նրանց մրցունակության բարձրացման նպատակով՝ ապահովելով ընտանեկան պարտականությունների համատեղումը
- 2.4.1. աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում իրականացնել կանանց աղքատության կրճատմանն ուղղված ծրագրեր, մասնավորապես արտոնյալ պայմաններով տրվող միկրովարկային ծրագրեր՝ նպաստելով կանանց փոքր և միջին բիզնեսի զարգացմանը

- 2.4.2. իրականացնել համապատասխան աշխատանքներ միջազգային դոնոր կազմակերպությունների ռեսուրսներն ուղղելու փոքր ձեռնարկատիրության զարգացմանը՝ կանանց համար կազմակերպելով հատուկ բիզնես դասընթացներ
- 2.5.1. իրականացնել հետազոտություններ գյուղական վայրերում կանանց համար աշխատատեղեր ստեղծելու և աշխատուժն օգտագործելու հնարավորությունների մասին
- 2.5.2. իրականացնել ծրագրեր՝ ուղղված գյուղական վայրերում տնայնագործության, արհեստագործության ծավալմանը, ինչպես նաև գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության խթանմանը
- 2.5.3. աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի շրջանակներում իրականացնել գյուղի կանանց աղքատության կրճատմանն ուղղված ծրագրեր, մասնավորապես արտոնյալ պայմաններով տրվող միկրովարկային ծրագրեր
- 2.6.1. կազմակերպել արվեստի և գիտության կլին գործիչների համար գործարարական դասընթացներ՝ տնտեսական հարաբերություններում արդյունավետ գործելու գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու նպատակով
- 2.7.1. իրականացնել ավանդականորեն կանանց զբաղվածությունը ապահովող ժողովրդական արվեստների և արհեստների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրեր:

Բաժին 3

Կրթության ոլորտ

Իրավիճակի վերլուծություն

Վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ Հայաստանում կրթական տարբեր մակարդակներում սովորողների ընդգրկվածության առումով սեռային որևէ խտրականություն չկա: Հատկանշական է նաև, որ տարրական կրթության ոլորտում աղջիկների և տղաների հավասար ընդգրկվածության ավանդույթները Հայաստանում գալիս են դեռևս 19-րդ դարից:

Կրթական տարբեր մակարդակներում սեռային ընդգրկվածության առումով կարելի է անել հետևյալ դիտարկումները:

2002թ. նախադպրոցական հիմնարկներ հաճախել է 44.849 երեխա, նրանցից՝ 22.488-ը աղջիկ: Երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հիմնարկներում կազմել է 18,5%:

Հիմնական կրթության ոլորտում (1-8-րդ դասարաններ) սովորողների թիվը 42.4372, որից 208.029՝ աղջիկներ, իսկ չնչին տարբերությունները հիմնականում պայմանավորված են ժողովրդագրական գործոններով: Սակայն այս հաշվեկշիռը, հատկապես վերջին տարիներին, ավագ դպրոցում խախտվել է հօգուտ աղջիկների: 2002-2003 ուսումնական տարում ավագ դպրոցում աղջիկները կազմում էին սովորողների շուրջ 51.8 տոկոսը:

Մասնագիտական կրթության ոլորտում առկա է կանանց որոշ գերակշռություն: 2002-2003 ուսումնական տարվա տվյալները վկայում են, որ տարբերությունները հատկապես ակնհայտ են եղել միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, որտեղ կանայք կազմել են ընդգրկվածների 66%-ը, իսկ տղամարդիկ՝ 34%-ը:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում կանանց տեսակարար կշիռը՝ 49.7%, պայմանավորված է եղել մասնավոր ԲՈՒՀ-երում ընդգրկվածության ավելի բարձր աստիճանով:

Ինչ վերաբերում է հետբուհական կրթական համակարգում կանանց ավելի փոքր տեսակարար կշիռին՝ 34.2%, ապա դա հիմնականում պայմանավորված է եղել ասպիրանտուրայում սովորող տղամարդկանց թվով՝ շուրջ 65.9%, մինչդեռ մագիստրատուրայում ավելի բարձր է եղել կանանց տեսակարար կշիռը՝ շուրջ 51.9%:

Դոկտորանտուրայում սովորողների թվաքանակը կազմել է 28, նրանց 27.4%-ը կանայք են:

Մանկավարժական համակարգի վերաբերյալ կարելի է անել հետևյալ դիտարկումները:

Մանկավարժների թվաքանակը նախադպրոցական հաստատություններում կազմել է 5.397, նրանցից կանայք՝ 5.394: Նախադպրոցական հիմնարկներում հիմնականում աշխատում են կանայք: Դեկավար աշխատողների թվաքանակը կազմել է 636, նրանցից երեքը՝ տղամարդ:

Հանրակրթական դպրոցներում 2002-2003 ուսումնական տարում աշխատել է շուրջ 54.276 մանկավարժ, որոնց 83.4%-ը կանայք են:

Միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում դասախոսների թվաքանակը կազմել է 4.157, նրանցից կանայք՝ 3.044, բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխանաբար՝ 8.495 և 3.906:

Գիտահետազոտական աշխատանքներ և մշակումներ իրականացնող մասնագետների թվաքանակը 2002թ. տարեվերջին կազմել է 6737, նրանցից 476-ը՝ գիտության դոկտորներ (կանայք՝ 83), 1758-ը՝ գիտության թեկնածուներ (կանայք՝ 688):

Վերը նշված թվային տվյալները վկայում են կրթական ոլորտում մանկավարժական համակազմի սեռային անհամասնության մասին: Հատկապես հանրակրթության ոլորտում առկա է ֆեմինացում /ուսուցիչների 83.4% կին է/: Աշխատավարձի ու մասնագիտական վարկանիշի ցածր մակարդակի և սոցիալական թույլ պաշտպանվածության պատճառով առկա է որակյալ կադրերի արտահոսք համակարգից: Հարկ է նշել, որ համակարգից հեռացան մաս մեծ թվով տղամարդ մանկավարժները: 1991թ. համեմատությամբ ուսուցչի աշխատավարձը 2001թ. նվազել էր մոտ 14 անգամ:

Իսկ մասնագիտական կրթության ոլորտում ընդգրկված դասախոսական համակազմում նկատելի է որոշակի հավասարակշռություն:

Խնդիր է այսօր մաս կրթության բովանդակության նորացումն ու համապատասխանությունը հասարակության նոր պահանջներին: Կրթության բովանդակության նորացման դանդաղ ընթացքը չի ապահովում ժողովրդավարացող հասարակության հոգևոր, տնտեսական ու սոցիալական առաջընթացը, քաղաքացիական հասարակության կայացումը և իրավական պետության ստեղծումը: Անհրաժեշտ է ընդլայնել կյանքի հմտությունների ձևավորման ու զարգացման, սեփական իրավունքների ու գենդերային հիմնահարցերի ուսուցման տարրերը: Կարևոր է մաս սովորողների շրջանում առողջ ապրելակերպի ուսուցումն ու ապագա ընտանեկան կյանքին նրանց նախապատրաստումը:

Անշուշտ, այս պարագայում մեծանում է մաս ծնողների հետ համագործակցությունը, նրանց օգնությունը երեխայի դաստիարակության և զարգացման, նրա հետ շփման իրականացման գործում: Վերջին տարիներին զգալիորեն նվազել է նախադպրոցական հաստատությունների և դրանցում ընդգրկված երեխաների թիվը: Եվ նախադպրոցական հաստատություններ չհաճախող երեխաների խնամքի ու դաստիարակության հիմնական պատասխանատուն դարձել է ընտանիքը: Ուստի, ընտանիքներում դաստիարակության գործընթացը ճիշտ կազմակերպելու նպատակով, ծնողներին անհրաժեշտ է մեթոդական օգնություն:

Խնդիրները

- սոցիալական թույլ պաշտպանվածություն և տղամարդ մանկավարժների արտահոսք համակարգից, կանանց գերակշռություն կրթության ոլորտում
- կրթության գործընթացի մասնակիցների շրջանում գենդերային մոտեցումների վերաբերյալ ոչ բավարար գիտելիքների իմացություն
- կրթության բովանդակության նորացման դանդաղ տեմպ
- նախադպրոցահասակ երեխաների խնամքի և դաստիարակության հարցերում ծնողների ոչ բավարար իրազեկություն:

Ռազմավարությունը

- 3.1. մանկավարժների սոցիալական երաշխիքների ապահովում
- 3.2. գենդերային գիտելիքների հարցերում իրազեկության ապահովում
- 3.3. ուսուցման մեջ նոր ծրագրերի ներառում
- 3.4. երեխաների խնամքի և դաստիարակության հարցերում ծնողների իրազեկության ապահովում

Միջոցառումները

- 3.1.1. մանկավարժական կադրերի աշխատավարձի չափի վերանայում և բարձրացում
- 3.1.2. կրթության համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացման հետևանքով կրճատված մանկավարժների հասարակական կյանքին ինտեգրման ծրագրերի իրականացում
- 3.2.1. մանկավարժական կադրերի վերապատրաստման դասընթացների կազմակերպում գենդերային հիմնահարցերի վերաբերյալ

- 3.2.2. դասագրքերի և ուսումնական ծրագրերի մեջ գենդերային խնդիրների ներառում
- 3.2.3. հանրապետության բուհերում գենդերային հիմնահարցերի վերաբերյալ հատուկ դասընթացի անցկացում
- 3.2.4. գենդերային հիմնահարցերի վերաբերյալ հասարակական, քաղաքական գործիչների, քաղաքացիական ծառայողների համար հատուկ դասընթացների, սեմինարների ու քննարկումների կազմակերպում
- 3.3.1. «Առողջ ապրելակերպ» դասընթացի մշակում և ներդրում հանրակրթական դպրոցներում, համապատասխան գրականության հրատարակում
- 3.4.1. նախադպրոցական երեխաներ ունեցող ծնողների համար երեխաների խնամքի ու դաստիարակության վերաբերյալ 15-օրյա ուսուցման կազմակերպում համապատասխան գրականության հրատարակում:

Բաժին 4

Կանանց առողջական վիճակի բարելավում

Իրավիճակի վերլուծություն

Վերջին տասնամյակում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները իրենց հետքը թողեցին նաև առողջապահության բնագավառում՝ առաջացնելով բազմաթիվ խնդիրներ: Բնակչության մեծամասնության համար անմատչելի դարձավ բժշկությունը և նվազեց բուժօգնության որակը հիվանդանոցներում և պոլիկլինիկաներում:

Գլուխ բարձրագրին սոցիալական հիվանդությունները, ինչպես տուբերկուլյոզը, սեռավարակները, հաճախակի դարձան օնկոլոգիական և սիրտ-անոթային հիվանդությունների բարձիքողի դեպքերը, իսկ միօրինակ, չբալանսավորված սպիտակուցներով, վիտամիններով, միկրոտարրերով աղքատ սննդի օգտագործումը բերեց հղի կանանց թերսնուցմանը, վաղ և ուշ անենիաների տասնապատիկ բարձրացմանը, ցածր քաշով նորածինների թվի ավելացմանը:

Վատացավ նաև կանանց վերարտադրողական առողջությունը, որի կարևորագույն ցուցանիշներից է մայրական մահացության ինդեքսը: Այն վերջին տարիներին տատանվում է 40/100000 կենդանածնության սահմաններում և իջեցման միտում առաջին չի նկատվում:

Չնայած 2000թ. ՀՀ Ժողովրդագրական առողջապահական հետազոտման (ՀԺԱՀ, 2000թ.) տվյալներով մանկածնման տարիքի կանանց 61% օգտագործում էին հակաբեղմնավորիչ միջոցներ, սակայն վստահելի, ժամանակակից հակաբեղմնավորիչները կազմում էին 22%, որի հետևանքով պտղաբերության կարգավորման նպատակով դեռևս շարունակվում է կիրառվել արհեստական վիժումը:

Վերջին տարիներին կապված «Վերարտադրողական առողջության» ազգային ծրագրի շրջանակներում ընտանիքի պլանավորման ծառայությունների բարելավման հետ, նկատվել է արթոսների կրճատման միտում: Եթե 1995թ. 1000 ծննդի և 1000 պտղաբեր տարիքի կնոջ հաշվով արթոսի ցուցանիշներն էին 623 և 30,5 1997թ-ին համապատասխանաբար 562 և 24.3, ապա 2002թ-ին՝ 305 և 8.4:

Մայրական մահացության դեպքերը հիմնականում պայմանավորված են կանանց առողջական վիճակի վատթարացմամբ, լիարժեք նախածննդյան հսկողության, ախտաբանությունների վաղ հայտնաբերման, ինչպես նաև ռիսկի խմբի կանանց ժամանակին բժշկական հսկողության ու համապատասխան ծննդալուծման բացակայությամբ:

Տազնապային է նաև ժողովրդագրական իրավիճակը: Վերջին տասնամյակում 2 անգամ կրճատվել է ծնելիությունը և 8 անգամ բնական աճը: Պատճառը ոչ միայն միգրացիան և ծանր սոցիալական պայմաններն են, այլև այդ ամենի հետևանքով առաջացած կանանց վերարտադրողական վարքագծի փոփոխությունը, բավական է նշել, որ պտղաբերության գործակիցը 2.6-ից դարձել է 1,1: Ծնելիության իջեցմանը հանգեցնում է նաև անպտղությունը, որը այսօր կազմում է 31.9%:

Առողջապահության ոլորտի քննարկումը լիակատար չի լինի, եթե անտեսվի բնական արատներով ծնված երեխաների խնդիրը:

Այս առումով 1998 – 2002թթ. բնածին արատների ցուցանիշը 1000 կենդանածնների հաշվարկով կազմում է 18.7 – 18.0 պրոմիլ:

Խնդիրները

- մայրական և մանկական բարձր հիվանդացություն և մահացություն
- կանանց վերարտադրողական առողջության վատթարացում, ծնելիության բնական աճի կրճատում
- մանկական մահացության կառուցվածքում պերինատալ կոմպլեքսների բարձր տեսակարար կշիռ /60%/ և աճի միտում
- սեռավարակային հիվանդությունների աճ
- ՄԻԱՎ-ի սկրինինգի բացակայություն
- կանացի օրգանների օնկոլոգիական հիվանդությունների աճ
- ժամանակակից, վստահելի հակաբեղմնավորիչ միջոցների օգտագործման ցածր մակարդակ
- պատուլոգիկ ծնունդների բարձր մակարդակ:

Ռազմավարությունը

- 4.1. աջակցել կանանց անվճար բուժօգնության ծավալների մեծացմանը
- 4.2. պահպանել հանրային ծննդատների համակարգը՝ բարելավելով ծննդատների նյութատեխնիկական հագեցվածությունը
- 4.3. մեծացնել բուժօգնության մատչելիությունը՝ պետպատվերի շրջանակների մեծացման միջոցով
- 4.4. նպաստել կանանց առողջական, մասնավորապես, վերարտադրողական առողջական վիճակի բարելավմանը (հիվանդությունների դեպքերը կրճատել 30% -ով)
- 4.5. նպաստել մայրական և մանկական մահացության ցուցանիշների նվազեցմանը (մինչև 2015թ. համապատասխանաբար կրճատելով 50% և 30% -ով) անպտղության հաճախականության, հատկապես երկրորդային, կրճատմանը (նվազագույնը 30 %-ով), ինչպես նաև պատուլոգիկ ծնունդների քանակի նվազեցմանը:

Միջոցառումները

- 4.1.1. մեծացնել պետության կողմից իրականացվող անվճար բուժօգնության ծավալները
- 4.2.1. իրականացնել մայրության, վերարտադրողական առողջության պահպանման լրացուցիչ միջոցառումներ՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում
- 4.3.1. կազմակերպել կանանց պարտադիր պարբերական բժշկական հետազոտություններ պոլիկլինիկաներում, ինչպես նաև շարժական ամբուլատորիաների միջոցով
- 4.3.2. ապահովել հղիների, կերակրող մայրերի և երեխաների սնուցման իրավիճակի շարունակական հսկողություն, իրականացնել առողջ սննդապահովման ծրագրեր
- 4.4.1. մշակել և իրականացնել ծրագիր մանկաբարձության և վերարտադրողության ասպարեզում գիտական նպատակային հետազոտություններ
- 4.5.1. ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ, այդ թվում գենետիկական հետազոտությունների երեխայի վաղ սաղմնային շրջանում շեղումները հայտնաբերելու նպատակով
- 4.5.2. ապահովել ՄԻԱՎ-ի նկատմամբ հղի կանանց սկրինինգի իրականացումը
- 4.5.3. բարձրացնել բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները
- 4.5.4. բարձրացնել բնակչության առողջապահական գիտելիքները զանգվածային լրատվամիջոցների միջոցով:

Բաժին 5

Կնոջ նկատմամբ բռնության երևույթի վերացում

Իրավիճակի վերլուծություն

Բռնությունը կնոջ նկատմամբ նոր խնդիր չէ և միշտ եղել է միջազգային հանրության մտահոգության ուշադրության կենտրոնում: Կինը ավելի թույլ և խոցելի է իր անձը և իրավունքները պաշտպանելու առումով և հետևաբար հաճախ բռնությամբ ուղեկցվող կոնֆլիկտների դեպքում զոհ է դառնում:

Բռնության դրսևորման ձևերը տարբեր են՝ ֆիզիկական, բարոյա-հոգեբանական, կենցաղային, սեռական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և այլն: Տարբեր են նաև բռնության պատճառները:

Այսօր հանրապետությունում առկա և ուշադրություն պահանջող խնդիրներից են կանանց և աղջիկների նկատմամբ կիրառվող սեռական և ֆիզիկական բնույթի բռնությունների դեպքերը, ինչպես նաև հարկադրանքի միջոցով վերջիններիս մի շարք իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցերը:

2001-2003թթ. ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տվել, որ այդ տարիներին հանրապետությունում ակնհայտ բռնությունների զոհ են դարձել համապատասխանաբար 52, 51, 55 կին:

Ուշադրության են արժանի նաև հետևյալ վիճակագրական տվյալները.

1998-2002թթ. ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել են անչափահաս աղջիկների նկատմամբ կատարված մի շարք հանցագործություններ.

սեռական բնույթի բռնություն 16 տարեկանը չլրացած կամ արբունքի չհասած անձի նկատմամբ՝ 1998թ. –ին՝ 11 դեպք, 1999 և 2000թթ.–ին՝ 16-դեպք, 2001-ին՝ 22 դեպք, 2002-ին՝ 8 դեպք, ամուսնական տարիքի կամ արբունքի չհասած անձի հետ փաստական ամուսնական հարաբերությունների հաստատում՝ 1998թ. –ին՝ 2 դեպք, 1999թ –ին՝ 6 դեպք, 2000թ.–ին՝ 3 դեպք, 2001թ-ին՝ 5 դեպք, 2002թ-ին՝ 8 դեպք: Սակայն բերված վիճակագրական տվյալները ամբողջական չեն, քանի որ շատ դեպքեր, պարզապես, չեն գրանցվում:

Բռնության դեպքեր հաճախ են հանդիպում մարմնավաճառությամբ զբաղվողների շրջանում: Մի երևույթ, որը վերջին տարիներին տարածում է գտել հանրապետությունում սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացման, ինչպես նաև մարմնավաճառների և շահագործողների և կազմակերպիչների նկատմամբ գործող օրենքների բավական լիբերալ լինելու պատճառով: Կարևոր պատճառներից է նաև դեռահասների ու երիտասարդության բարոյասեռական դաստիարակության արդյունավետ համակարգի բացակայությունը:

Խնդիրները

- վիճակագրության բացակայություն, սոցիոլոգիական և գիտական հետազոտությունների պակաս
- դեռահասների և երիտասարդության բարոյասեռական դաստիարակության արդյունավետ համակարգի բացակայությունը:

Ռազմավարությունը

- 5.1. ապահովել բռնության երևույթի վերաբերյալ ուսումնասիրությունների կատարումը և ամփոփ տեղեկատվության ստեղծումը
- 5.2. մշակել կանանց և աղջիկների օրինական շահերի և իրավունքների արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ
- 5.3. նպաստել մարմնավաճառության և սեռական շահագործման երևույթների կանխարգելմանը
- 5.4. մշակել բռնության ենթարկված անձանց ընտանիքներում բռնության հետևանքների վերացման մեխանիզմներ և մեթոդներ:

Միջոցառումները

- 5.1.1. իրականացնել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում բռնության դեպքերի բացահայտմանն ու դրանց պատճառների պարզաբանմանն ուղղված հետազոտություններ
- 5.2.1. մշակել բռնությունը բնութագրող ցուցանիշների համակարգ, ներդնելով վիճակագրական հաշվետվություններում
- 5.2.2. ուսումնասիրել խնդրի լուծման ուղղությամբ այլ երկրների հաջողված փորձը
- 5.3.1. կազմակերպել բռնության ենթարկված կանանց հետ աշխատող սոցիալական աշխատողների, առողջապահական, կրթական համակարգի մասնագետների և իրավապահ մարմինների վերապատրաստման և ուսուցման համալիր դասընթացներ
- 5.3.2. հանրապետության քաղաքների և մարզերի համապատասխան հաստատություններում (պոլիկլինիկա, ոստիկանություն, սոցիալական ծառայությունների կենտրոններ) ստեղծել

բռնությունների ահազանգման և կանխարգելման մասնագիտական ծառայություններ՝ թեժ գծերով

5.4.1. ուսումնասիրել խնդրի լուծման ուղղությամբ այլ երկրների հաջողված փորձը

5.4.2. հանրապետության քաղաքների և մարզերի համապատասխան հաստատություններում ստեղծել բռնությունների հետևանքների վերացման մասնագիտական ծառայություններ, բռնությունից տուժածներին բուժ.օգնության, իրավաբանական խորհրդատվության, սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված ծառայությունների տրամադրման համար:

Բաժին 6

Կանանց և աղջիկների նկատմամբ թրաֆիկինգի երևույթի վերացում

2002թ. հունիսի 5-ին ԱՄՆ Պետքարտուղարությունը հրապարակեց մարդկանց թրաֆիկինգի վերաբերյալ 2001թ. ամենամյա համաշխարհային զեկուցագիրը, որտեղ Հայաստանը ըստ իրենց կողմից սահմանված սանդղակի հայտնվեց ամենաանբարենպաստ՝ 3-րդ խմբում: Ըստ այդ զեկուցագրի Հայաստանը համարվում է կանանց և աղջիկների դուրս բերման երկիր:

Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ քայլեր է ձեռնարկել ստեղծված իրավիճակը շտկելու ուղղությամբ: 2004թ. հունվարի 15-ին ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առքուվաճառքի (թրաֆիկինգ) կանխման 2004-2006թթ. միջոցառումների ազգային ծրագիրը հաստատելու մասին» N58-Ն որոշումը: Ծրագրում հիմնական միջոցառումներն ուղղված են կանանց և աղջիկների նկատմամբ թրաֆիկինգի երևույթի վերացմանը: Ծրագրի հիմնական ուղղություններն են.

- Ուսումնասիրությունների կատարում
- Կանխարգելում
- Պաշտպանություն և աջակցություն

Սույն ծրագրով միջոցառումներ չեն նախատեսվում: Հանրապետությունում կանանց և աղջիկների նկատմամբ թրաֆիկինգի երևույթի վերացմանն ուղղված միջոցառումները կիրականացվեն «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առքուվաճառքի (թրաֆիկինգ) կանխման 2004-2006թթ. միջոցառումների ազգային ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

Բաժին 7

ԶԼՄ-ների և մշակութային հաստատությունների դերը կանանց հիմնահարցերի լուսաբանման և կնոջ ընդօրինակելի կերպարի ձևավորման գործում

Իրավիճակի վերլուծություն

ԶԼՄ-ների դերը հասարակական գիտակցության ձևավորման գործում շատ մեծ է: Գիտակցելով այդ, Պեկինյան համաժողովն իր հանձնարարականներում որոշակի առաջարկություններ է ներկայացրել մասնակից պետություններին:

ԶԼՄ-ների դերը կնոջ ընդօրինակելի կերպարի ձևավորման գործում կարևորվում է մաս Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով հանձնաժողովի կողմից:

Կանանց հիմնախնդիրները թեև ներկայացվում են ԶԼՄ-ների կողմից, սակայն բավարար չափով չեն լուսաբանում առկա խնդիրները, կանանց կյանքի իրական բարդությունները, հասարակական կյանքին կանանց լիարժեք մասնակցությանը խանգարող պատճառները: Ըստ արժանավույն չի ներկայացվում մաս հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում նրանց կատարած ներդրումը: ԶԼՄ-ների կողմից կանանց հիմնախնդիրների ներկայացման ձևերը մեծապես են նվաստացուցիչ:

Բացասական դերակատարում ունեն գեղագիտական առումով էժանագին, կնոջ արժանապատվությունը վիրավորող պատկերներով լեցուն հեռուստահաղորդումները, ֆիլմերը, հեռուստասերիալները և տարբեր կարգի շոուները, որոնք հաճախ քարոզում են ընտանեկան և հասարակական հակասությունների լուծման բռնի և ոչ քաղաքակիրթ մեթոդներ, ինչպես նաև նպաստում են բարոյական արժեզրկմանը և հասարակայնորեն անընդունելի բարքերի ձևավորմանը:

Բազմազան գովազդներում կինը հաճախ ներկայացվում է որպես ապրանք կամ ապրանքի հավելուկ: Մինչդեռ արվեստի և լրատվամիջոցների խնդիրը նաև կնոջ և տղամարդու դրական իդեալների ձևավորումն է ու բացասական կարծրատիպերի հաղթահարումը: Այստեղ մեծ գործ ունեն անելու մասնավորապես հեռուստատեսությունները, որոնք նաև պետք է շանտեսեն իրենց թողարկումներում շեշտադրումը կնոջ և տղամարդու առանձնահատկությունների և տարբերությունների:

Խնդիրները

- ՁԼՄ-ների ոչ բավարար և արդյունավետ մասնակցությունը կանանց հիմնահարցերի լուսաբանման գործում
- կնոջ և տղամարդու արժանապատիվ, ընդօրինակելի կերպարների ստեղծման ուղղությամբ ՁԼՄ-ների և մշակութային հաստատությունների անարդյունավետ գործունեությունը, կնոջ արժեք-միջոցի վերաբերյալ կարծրատիպի քարոզումը
- կնոջ արժանապատվությունը վիրավորող տեղեկատվության անարգել տարածումը:

Ռ-ազմավարությունը

- 7.1. ապահովել կանանց հիմնահարցերի արդյունավետ լուսաբանումը, ինչպես նաև կնոջ և տղամարդու ընդօրինակելի կերպարի ձևավորմանն ուղղված հաղորդումների և հրապարակումների թողարկումը հանրային լրատվամիջոցներով
- 7.2. օժանդակել մասնավոր ՁԼՄ-ներով կանանց հիմնախնդիրների լուսաբանմանը
- 7.3. նպաստել հասարակական գիտակցության մեջ կնոջ և տղամարդու իդեալների ձևավորմանը և կնոջ հեղինակության բարձրացմանը

Միջոցառումները

- 7.1.1. լրագրողների համար գենդերային իրազեկության բարձրացման դասընթացների կազմակերպում
- 7.2.1. պատվիրել հեռուստառադիոհաղորդումներ, պարբերականներում հատուկ էջեր, հրատարակել գրքույկներ՝ նվիրված կանանց իրավունքներին և գենդերային հիմնախնդիրներին
- 7.2.2. նպաստել ՁԼՄ-ների, ՀԿ-ների և իրավասու մարմինների միջև առողջ գործընկերության հաստատմանը
- 7.3.1. իրականացնել ռադիո և հեռուստահաղորդումների, ինչպես նաև հրապարակումների մոնիտորինգ՝ կնոջ հասարակայնորեն անցանկալի և նսեմացնող կերպարը ներկայացնելու միտումը հաղթահարելու համար
- 7.3.2. ապահովել ՁԼՄ-ների, Ինտերնետի և հոգևոր-մշակութային հիմնարկների միջոցով կնոջ արժանապատվությունը ոտնահարող տեղեկատվության քարոզման և տարածման գործընթացի վերահսկողությունը

Բաժին 8

Ինստիտուցիոնալ բարեփոխումներ

Իրավիճակի վերլուծություն

Ներկայումս հանրապետությունում կանանց հիմնահարցերով զբաղվում է ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունում 1997թ.-ին ստեղծված կանանց, և երեխաների հիմնահարցերի վարչությունը, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարության համակարգում գործում է մոր և մանկան առողջության պաշտպանության բաժինը: 1997թ.-ին վարչապետի որոշումով ստեղծվեց նաև հանձնաժողով Գ-ենդերային քաղաքականության

գարգացման 1998-2000թթ. ծրագրի իրականացման նպատակով: Դա կանանց վիճակի բարելավման երեք տարվա ծրագիր էր, որը չիրականացավ ֆինանսավորման բացակայության պատճառով: 2000թ-ին ստեղծվեց ՀՀ վարչապետին կից Կանանց խորհուրդ, որը գործում է հասարակական հիմունքներով և ունի խորհրդակցական բնույթ: 2002թ.-ին Սոցիալական ապահովության նախարարությունում նշանակվեց փոխնախարար, որը պետք է համակարգեր կանանց խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները: Սակայն բոլոր այս կառույցները լուծում են սոցիալական, առողջապահական, զբաղվածության հետ կապված հարցեր և չունեն բավականաչափ ռեսուրսներ և լիազորություններ՝ կանանց հիմնախնդիրների լուծման և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված արդյունավետ քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար:

Խնդիրները

- Կանանց իրավունքներով զբաղվող համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի բացակայությունը

Ռազմավարությունը

8.1.մշակել կանանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմներ

Միջոցառումները

8.1.1.մշակել առաջարկություններ գենդերային հիմնահարցերով զբաղվող կառույց ստեղծելու վերաբերյալ

8.1.2.նպաստել սոցիալական գործընկերության քաղաքականության գարգացմանը կառավարության, ՀԿ-ների և միջազգային կառույցների միջև: